ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՆ ԱՅՑԵԼԵԼ ԵՆ «ԵՌԱԲԼՈՒՐ» ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՆԹԵՈՆ

09.05.2023 11:16

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ներկայացուցիչները Պալատի նախագահի առաջին տեղակալ Արմեն Ասատրյանի գլխավորությամբ այցելել են «Եռաբլուր» զինվորական պանթեոն:

Փաստաբանական համայնքի անդամները ծաղիկներ են խոնարհել Արցախյան պատերազմներում զոհված հայորդիների շիրիմներին, մեկ րոպե լռությամբ հարգել նրանց հիշատակը:

«Եռաբլուր» զինվորական պանթեոնում ննջում են նաև փաստաբանների զավակներ, ովքեր Հայկական բանակի անպարտելիության ու հայրենիքի պաշտպանության համար չխնայեցին իրենց կյանքը:

Հավերժ փառք և խոնարհում նվիրյալ հերոսների հիշատակին:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })